դու ի. Ալի ի. Ֆադլին Հայաստան, որ գնաց Նախիջեւան. այստեղ Նորա մօտ եկաւ Եղիդ ի. Հիսն՝ Նրան ներելու խնդրանքը... (պակասորդ)։

230 թ. Հայաստան ապստամբեցաւ։ Արաբացի բնակիչք, երկրի իշխանք եւ մեծամեծները խռովեցան, իսկ Ջաբալի եւ Բաբ-էլ-աբուաբի պետերը տիրեցին սահմանակից երկրներին. սուլթանի իշխանութիւնն թուլացաւ։

Ամիրապետ Հարուն Վաղիք նշանակեց Խալիդ ի. Եղիդ ի. Մազեադին կառավարիչ (Հայաստանի վերայ), Նորա իշխանութեան տակ դնելով հիւսիսային Արաբիոյ աւազոտ մասն, եւ կցելով Դիար Ռաբիոյ ինչ ինչ քաղաքներ. Խալիդ մեկնեցաւ մեծ զօրքով։ Առնելով այս լուրը երկրի իշխանք ահաբեկ եղան եւ տեղեկացրին Նորան, որ նոքա չեն դադարել հնազանդ լինել (ամիրապետին), ուղարկելով Նորան ընծաներ. Խալիդ պատասխանեց՝ "Ես մեղաւորից միայն ընծայ կ'ընդունեմ". այս բանը սաստկացրեց նոցա դժգոհութիւնը։ Խալիդ հրամայեց (Տփղիսի իշխան) Խասակ ի. Իսմայէլին Նորա մօտ գալ. բայց որովհետեւ նա չ'անսաց, Խալիդ արշաւեց Նորա վերայ եւ արդէն Նորան յաղթելու մօտ էր, երբ հիւանդացաւ եւ կարճ միջոցից յետոյ մեռաւ. (Նորա մարմինը) դագաղի մէջ տարուեցաւ Դուին եւ այնտեղ թաղուեցաւ։ Նորա բնկերները ցրեցան, եւ ամբողջ երկիրը անկարգ դրութեան մէջ մնաց։

Վաղիք դրեց Մուհամեդ ի. Խալիդին Նորա հօր փոխարէն, որ պատերազմեցաւ Ծանարների եւ Խասակի հետ, մինչեւ նոցա հալածեց եւ արտաքսեց (երկրից). այնուհետեւ Հայաստան բարեկարգ վիճակի մէջ էր։

---

1 Ըստ Տաբարիի՝ Աբու Աբդուլլահ Մուտաղ Բիւլլահին։